ԲՆԱՆԿԱՐԸ ԱՆԱՏՈԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ՄԻՍԱԿ ԱՍԼԱՆՅԱՆ
հայցորդ
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
misakaslanyan@gmail.com

ՀՏԴ՝ 75.047; 7.036.1
DOI: 10.54503/1829-4278.2024.2-96

Ամփոփագիր

Հոդվածում խոսվում է 20-21-րդ դդ. հայ կերպարվեստում ուրույն և ճանաչելի ձեռագիր ունեցող նկարիչներից մեկի՝ Անատոլի Գրիգորյանի բնանկարների մասին: Քննարկվում են նրա մի շարք աշխատանքներ, որոնցում գովերգվում է հայրենի բնությունը: Հարազատ մնալով իր գեղանկարչական սկզբունքներին՝ Գրիգորյանը կերտում է Հայրենիքի պատկերը՝ այն հասցնելով կատարելության: Ոչ մի կտավում նա չի պատկերում պաթոսային հորինված տեսարաններ. դրանք առօրեական, ոչնչով չառանձնացող տեսարաններ են: Բայց նկարչին հաջողվում է ցանկացած սովորական ծառին, թփին, քարին հաղորդել աննկարագրելի հուզականություն և զգայականություն:

Ա. Գրիգորյան-նկարչի արվեստի ուժը՝ դիտողի վրա ունեցած հզոր ազդեցությունն է: Գրիգորյանը, միտումնավոր պարզեցնելով ֆորմաները, դեկորատիվ հնչերանգ փոխանցելով նրանց, անսահման հնարավորություն է բացում դիտողի համար՝ համաստեղծագործելու նկարչի հետ, ուր յուրաքանչյուր պայմանականության, դիմակի, թատերական կերտվածքով կերպարի մեջ դիտողը տեսնում է իր սեփական հերոսին, իր ապրումներն ու հույզերը, իր հայրենիքը:

Բանալի բառեր. Անատոլի Գրիգորյան, բնանկար, հայրենիք, ուրվագիծ, միջավայր, տարածական անսահմանություն, համայնապատկեր, դիմակ, թատերական կերտվածք, նույնականություն

Անատոլի Գրիգորյանը 20-րդ դարի հայ կերպարվեստում իր ուրույն դերն ունի: Ցավոք, մինչ այժմ նկարչի արվեստի մասին չկա ծավալուն և լուրջ ուսումնասիրություն՝ բացառությամբ ցուցահանդեսների կատա-

լոգների[1] նախաբանների ակնարկային մի քանի պարբերությունների և մեկ-երկու ընդհանուր ճանաչողական հոդվածների[2]: Նկարչի արվեստը կարիք ունի բազմակողմանի ուսումնասիրության, քանի որ Անատոլի Գրիգորյանը ոչ միայն շատ ինքնատիպ արվեստագետ է, այլ, որոշ առումով, նաև 20-րդ դարի երկրորդ կեսի հայ կերպարվեստի յուրահատուկ պատկերը կերտողներից է: Նրա յուրաքանչյուր աշխատանք շատ անկեղծ է և խոր վերապրված: Նկարչի կերտած կերպարներն այնքան ամփոփ են և համոզիչ, որ թվում է, թե ապրում են սեփական կյանքով և հույզերով:

Անատոլի Գրիգորյանի աշխատանքներին բնորոշ է հստակ գիծը, հագեցած գույնը, կոնտրաստը: Այստեղ միաձուլվում են առօրյա կյանքն ու պոեզիան, իրականն ու երևակայականը: Վարպետին բնորոշ հատուկ արտիստիզմը, ոճի զգացողությունը և նկարչական չափի զգացումը յուրաքանչյուր ստեղծագործություն դարձնում են առավել զգայական ու շոշափելի: Դինամիկ ռիթմի և պլաստիկայի շնորհիվ պոետիկական աշխարհընկալումը դառնում է իրականի և երազայինի ներդաշնակ միասնություն:

Նրա ստեղծագործություններն առանձնանում են գունային ներդաշնակությամբ, վրձնահարվածների ռիթմիկ մշակումներով և լուսային ակտիվ հակադրումներով: Կտավներն ունեն առանձնակի ձգողականություն. այստեղ ամենայն ամբողջականությամբ օբյեկտիվացվում և հավասարակշռվում է նկարչի ներաշխարհը, նրա տրամադրությունների և խոհերի ողջ համապատկերը:

Նրա արվեստը միատարր չէ. ստեղծագործական տարբեր շրջանների նրա աշխատանքներում կգտնենք թե՛ դեկորատիվ, թե՛ կուբիզմին և թե՛ սիմվոլիզմին բնորոշ տարրեր («Ներկայացում», 2001, «Զարթոնք», 2007, «Հովհարով կինը», 2004): Խոսքը ոչ թե հստակ որևէ հեղինակի հետևելուն, այլ գույնը, գիծը, միջավայրը պատկերելու գեղարվեստական սկզբունքների մասին է: Ընթացքում նկարչի գիծը դառնում է այնքան խոսուն, ամուր և բազմերանգ, որ նրան հաջողվում է մի գծով ստանալ արտահայտիչ, ամփոփ, կատարյալ պատկերներ («Վաղ գարուն», 1986 (նկ. 2), «Լողափ», 1996, «Ամառ», 2006):

Նրա վրձնահարվածն ունի բազմաթիվ հնարավորություններ՝ հպում,

1 **Գոմցյան Ն.**, *Անատոլի Գրիգորյան, կատալոգ*, Երևան, «Տիգրան Մեծ», 2008:
2 **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ.**, *Հայ արվեստի պատմություն*, Երևան, «Զանգակ», 2009, էջ 576, **Աղասյան Ա.**, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, էջ 292:

ուժ, հարված, ուղղություն, ֆորմա, և այս ամենը օգնում է «հնչեցնելու», արտահայտելու ինչ-որ նվիրական էություն: Հորինվածքային և գունային ներդաշնակ մտածողությունը դարձնում են այս նկարչին գեղանկարչության «բանաստեղծ»: Նրա վրձինը մշտապես մնում է անհողդողդ, սուր, հստակ: Յուրաքանչյուր վրձնահարված, ձեռքի յուրաքանչյուր շարժում ասես լույսով և օդով լի տարածության անտեսանելի մի գործվածք է հյուսում: Գունային բաղադրությունը մոտ տարածությունից դիտելիս թվում է անզուսպ, բծերը զուրկ են գծային որոշակիությունից, և կտավի կամ ստվարաթղթի վրա դրված յուրաքանչյուր գույն հիմքում ձուլվում է հարևան գույնի հետ՝ դարձնելով մշակվածքը խիտ և գունային ելևէջներով հարուստ:

20-րդ դարի երկրորդ կեսը բավական բարդ և բազմազան ստեղծագործական նորամուծություններով լի ժամանակաշրջան էր: Հայ կերպարվեստում նորագույն շրջանի մեկնարկ կարելի է համարել 1962 թվականին կայացած «5-ի ցուցահանդեսը», որը մեծ դեր ունեցավ երիտասարդ նորովի մտածող ստեղծագործողների համար: Սոցռեալիզմի մտածողությանը զուգահեռ նոր շունչ մտավ հայ կերպարվեստ, որը, բնականաբար, երկակի ընդունելության արժանացավ հայ արվեստագետների կողմից: Նույն շրջանում Հենրիկ Իգիթյանի ջանքերով ստեղծվեց Ժամանակակից արվեստի թանգարանը (1972 թ.), 60-80-ական թվականներին մեծ վերելք ապրեցին գրքային գրաֆիկան, կոթողային և հաստոցային քանդակագործությունը: Այս շրջանում ձևավորվեցին անկախության տարիների ստեղծագործող նկարիչներից շատերի գեղարվեստական անհատականությունը, ձեռագիրն ու ոճը:

Նկարիչներից շատերը աշխատում էին տարբեր ժանրերում՝ առավել հաճախ՝ բնանկարի, դիմանկարի և նատյուրմորտի:

20-րդ դարի երկրորդ կեսին հայ արվեստագետներից գրեթե բոլորն էլ անդրադարձել են բնանկարի ժանրին: Կարող ենք առանձնացնել մի քանի մոտեցում, տիպական ընդհանրություններ և ոճական առանձնահատկություններ՝ ռեալիստական բնանկարներ՝ Բաբկեն Քոլոզյանի, Ռոմանոս Սարգսյանի, Եփրեմ Սավայանի, Գրիգոր Աղաբաբյանի արվեստում, միստիկ-խորհրդապաշտական արտահայտումներ Մարտին Պետրոսյանի, Հովսան Սարգսյանի կտավներում:

Անատոլի Գրիգորյանի բնանկարները իրենց աշխարհընկալմամբ, մտածողությամբ և ոճական լուծումներով առավել նմանվում են Էդվարդ Վարդանյանի, Ռուբեն Մանուկյանի ոճին: Այստեղ մտածողությունը հիմնված է գունային լուծումների, մեծ ծավալային զանգվածների համադրումների և, անգամ ամենաիրական միջավայրում, վերացական հեքիաթային հուզական հենք ստեղծելու կարողության վրա:

Անատոլի Գրիգորյանի 1990–ականներին ստեղծված բնանկարներին բնորոշ են մեծ գունային զանգվածները: Նկարում, ասես, իրար վրա են տեղադրվում լոկալ գունային հարթությունները: Նկարիչն աշխատում է հակադրություններով՝ շեշտադրելով կամ գույնը, կամ գիծը («Սևան. Սպիտակ քարեր», 1987, կտավ/յուղաներկ, 50x55, «Վաղ գարուն», 1986, կտավ/յուղաներկ, 70x60): Այս բնանկարները մտածված են մի հիմնական գույնի տարբեր նրբերանգներով:

«Սևան. Սպիտակ քարեր» (նկ. 1) կտավում մեծ գունային հարթություններով առանձնացած են քարերը, ծառերը, հորիզոնին հպվող Սևանը, և վրայից բազմաթիվ գունային վրձնահարվածներով ամփոփվում է պատկերը: Գեղադիտակ հիշեցնող գունային հրավառությունը հորինվածքին հաղորդում է շարժում և ռիթմ: Այդ հակադրությունների շնորհիվ ստացվում է մեղմիկ, ջերմ և, դրա հետ մեկտեղ, մոնումենտալ արտահայտչականությամբ օժտված միջավայր, նկարչի երազած աշխարհի մի անկյուն:

Հաճախ միջավայրի բացակայությունը ստեղծում է տարածական անսահմանության պատրանք: Պարզ ձևերը և ընդգծված լուսաստվերային մշակումները շեշտված կառուցող ուրվագծի օգնությամբ հավաքվում են և պահվում՝ հավասարակշռվում, դառնալով պարզ և միևնույն ժամանակ խիստ: Նրանք ամբողջացնում են հորինվածքը և վկայում Անատոլի Գրիգորյանի գեղարվեստական գրագիտության, գծին և գույնին վարպետորեն տիրապետելու մասին:

Նա փնտրում է համոզիչ հատկանիշներ և արտահայտիչ ուրվագիծ: Նա ուսումնասիրում է գծի պատկերման հնարավորությունները, աշխատում ուրվագծով: Նրան հետաքրքրում են նաև կտրուկ հակադրությունը և նրբերանգային անցումները: Յուրաքանչյուր կտավ նոր խոսք է՝ գծի արտիստիկ վարպետությամբ, ձևի զարմանալի ներդաշնակությամբ, որտեղ յուրաքանչյուր՝ անգամ փոքրիկ հատվածում թաքնված է մի ամբողջական նկարի բովանդակություն:

2000–ականներից սկսած նկարչի մոտեցումը փոխվում է. նկարները պատմողականից դառնում են խորհրդանշական: Ամեն մի փոքր, չնչին դրվագ դառնում է հավաքական համայնապատկեր, ընդհանրացվում է, միավորվում և պատկերվում որպես ձոն կամ օրհներգ բնությանը և այնտեղ ապրող մարդկանց («Զմեռ», 2008, կտավ/յուղաներկ, 70x50, «Լքված փողոց», 2007, կտավ/յուղաներկ, 70x50, «Հայկական բնանկար», 2007, կտավ/յուղաներկ, 65x55):

«Զմեռ» բնանկարում (նկ. 4) պատկերված է խաղաղ և ամայի մի տեսարան, որտեղ ուժգին և էքսպրեսիվ վրձնահարվածները նկարին թավ–

շյա ֆակտուրա են հաղորդում: Փիրուզագույն, երկնագույն երանգների միանվագ ինտոնացիան խախտվում է մանուշակագույնի և մուգ, թանձր կանաչի միջոցով, որոնք հակադրումների մեջ մտնելով մեղմ, սառը երանգների հետ՝ որոշակի խորություն են փոխանցում հարթային թվացող հորինվածքին:

«Լքված փողոց» (նկ. 5) կտավում հորինվածքը կառուցված է ուղղահայացների և շեղանկյունների համադրմամբ: Մեծ զանգվածներով են պատկերված նկարը եզրագծող շենքերը: Ոլորապտույտ ճանապարհը շարժում է մցնում ընդհանուր ստատիկության մեջ, որն ընդգծվում է ծառի ճյուղերի թեքվածքներով: Ողջ կտավը ողողված է բազմապիսի գունաբծերով, որոնք գրաֆիկական ճշգրտությամբ են հաշվարկված:

Այս շրջանում նկարչի ներկապնակ են մտնում նոր գույներ և երանգներ: Եթե, վաղ շրջանում Գրիգորյանը հիմնականում աշխատում էր տաք գույներով սահմանափակվելով կարմիրների, դեղինների նրբերագնեռով, ապա 1990-ականներից հետո, ներկապանակը հարստանում է սառը գույների բազմազանությամբ՝ կապույտներ, կանաչներ, սիրված գույներից է դառնում մանուշակագույնը: Իսկ կտավները, միևնույնն է, մնում են տաք և ջերմ: Այստեղ կարևոր դեր է կատարում նկարչի ընտրած լույսը: Վարպետորեն բաշխելով այն՝ Անատոլի Գրիգորյանը ստանում է գունային և գունավոր մեծ զանգվածներ:

Անատոլի Գրիգորյանը ազգային նկարիչ է[1]: Նրա գեղանկարչական աշխատանքներում նոր իմաստ որոնելով՝ նորովի ես զգում Հայաստանը: Այստեղ անկեղծորեն փոխանցված է հայկական անկրկնելի շունչն ու հոգին:

«Հայկական բնանկար»-ը (նկ. 6) շատ կերպարային է լուծված: Ինչպես Մ. Սարյանի «Հայաստան» կտավում է ի մի բերված այն ամենը, որը խորհրդանշում է Հայաստանը, նույնն էլ այստեղ՝ յուրաքանչյուր առանձին տարր՝ հավաքական պատկերն է հայրենիքի: Տունը, քարերը՝ կոնկրետ տեղանք լինելուց բացի, դառնում են հատուկ անուններ: Սա Հայաստանն է, իր նիստուկացով, կենցաղով, լույսով, ջերմությամբ, վառ գույներով: Թվում է, թե պարզ հորինվածք է, հիշվող ջերմ գույներով, մեծ ծավալային մշակումներով, սակայն շատ մանրամասն են վրայից աշխատած ռիթմիկ գծերը, թրթռուն վրձնահարածները: Նկարիչը առաջնություն չի տալիս կերպարվեստի որևէ տեսակի. այստեղ հավասարաչափ աշխատում են թե՛ գիծը, թե՛ գույնը:

Գրիգորյանն իր աշխատանքներում պատկերում է հայրենի բնությունը կամերային, ոչ պաթետիկ և վիթխարի: Ողջ տիեզերքը խտանում,

1 **Գոմցյան Ն.,** *Անատոլի Գրիգորյան…*, էջ 7:

փոքրանում և տեղավորվում է սովորական բակի մի գողտրիկ անկյունում: Սակայն այս կամերայնությունը թվացյալ է, վերնաշերտային՝ բավական է մի փոքր ուշադիր նայել նկարին, և այնտեղ մեկը մյուսին հաջորդելով բացվում են նորանոր հուզական և իմաստային շեշտեր: Նրա բնանկարներում ուրույն լավատեսությամբ և լուսավոր գույներով են պատկերված թե՛ գարնանային զովությունը, թե՛ ամռան շոգը: Այս բնապատկերները անհատի յուրովի աշխարհընկալման և անսահման երևակայության արդյունքն են:

Նկարչին բնորոշ է կերպարային մտածողությունը. նրա պատկերած բնանկարներում յուրաքանչյուր առանձին ծառ, ժայռ կամ տերև, ինքնին արդեն ավարտուն պատկեր է, ասես լինի մի հավաքական կերպար: Համեմելով պատկերը հարազատ գույներով և ձևերով, իր աշխարհայացքի միջոցով վերարտադրվում է իրեն պատկանող աշխարհը: Անգամ սյուժետային պատկերներում, երբ բնությունը միայն գործողության համար նախատեսված ֆոն պետք է լինի, այն, միևնույնն է, այնքան խոսուն է, որ, ասես, նկարի առանձին հերոս լինի:

Ա. Գրիգորյան-նկարչի արվեստի ուժը՝ դիտողի վրա ունեցած հզոր ազդեցությունն է: Պարունակելով իրենց մեջ նկարչի վարակիչ դրական էներգետիկան, այս լավատեսական ստեղծագործությունները ջերմություն են փոխանցում: Օգտագործված խուլ ու հնչեղ գույները, միմյանց վրա ներգործելով և իրար հաջորդելով՝ հրաշալի գունագեղ սիմֆոնիա են ստեղծում:

Գրիգորյանը իրերին ծավալներ է հաղորդում և՛ գունային, և՛ գծային մոդելավորմամբ, միտումնավոր պարզեցնելով ֆորմաները, դեկորատիվ հնչերանգ փոխանցելով նրանց, նկարիչը անսահման հնարավորություն է բացում դիտողի համար: Թվացյալ վերնաշերտային պարզությունն ու պայմանականությունը անսահման հնարավորություն են տալիս դիտողին համաստեղծագործելու նկարչի հետ. եթե պատկերը կոնկրետ և ռեալիստական չէ, յուրաքանչյուր պայմանականության, դիմակի, թատերական կերտվածքով կերպարի մեջ դիտողը տեսնում է իր սեփական հերոսին, իր ապրումներն ու հույզերը, իր հայրենիքը:

«Մայիս» (1996, կտավ/յուղաներկ, 70x60) (նկ. 3), կտավը լուծված է իմպրեսիոնիստական թեթևությամբ: Հազարավոր թրթռուն վրձնահարվածներն են կերտում պատկերը: Նրանք դրված են տարբեր ուղղություններով՝ ուղղահայաց, շեղանկյուն և այդ նյարդային ռիթմը թարմության, օդի տրամադրություն է ստեղծում: Յասամանի գունագեղությունը հավասարակշռվում է հետևում պատկերված ծառերի գորշ բներով և հողի թաց մակերեսով: Հետաքրքիր է ընտրված դիտակետը՝ դիմացից՝ անկյան տակ: Առաջին պլանում միտումնավոր թողնված դատարկ

հատվածը օդով լցնում է պատկերը, չի ծանրաբեռնում այն: Ձևերի համոզիչ և դեկորատիվ ծավալները նա ստանում է երկրաչափական հարթ գունաբծերի երանգների տրոհմամբ և համադրությամբ: Նկարի մակերեսը բաղդատված է ռիթմիկ հարթությունների և, չնայած, որ նկարիչը այստեղ կիրառել է անթափանց, պաստոզային ներկեր, հորինվածքը ամբողջովին ողողված է լույսով, հատող ձևերի նուրբ ուրվագծերը ասես հալչում են ընդհանուր մթնոլորտում: Վրձնահարվածները ինտենսիվորեն ձգվում են դեպի կոմպոզիցիայի կենտրոն, որտեղ էլ հատվելով, ասես ճառագայթներ կազմելով, անդրադառնում են իրար մեջ:

Անատոլի Գրիգորյանը չի փնտրում պատկերման հորինված նյութ՝ նրա նյութը պատրաստ է, իր կողքին, շրջապատում. այդ է պատճառը, որ նրա ստեղծագործություններն անկեղծ, մտերմիկ սիրո վկայություններ են[2]:

Արդի գեղանկարչության մեջ Անատոլի Գրիգորյանը նոր որակ, նոր մշակույթ է ներմուծում: Ուրվագծերի և դրանց ռիթմիկ անցումների, հաճախ նաև գունային մեղմ ու թափանցիկ լուծումների շնորհիվ նկարիչը ստեղծում է մ՛երթ խիստ լարված ու դրամատիկ վիճակներ, մե՛րթ էլ հանգում փիլիսոփայական ընդհանրացման: Նրա գիծը զարմանալի խոսուն է. այն կարծես արագ ընթանում և հանկարծ բեկվում է՝ պատկերի կառույցին հաղորդելով լակոնիկ, բայց չափազանց տարողունակ բովանդակություն: Երբեմն լույսն ու գույնը քնքշորեն և նրբությամբ են ճեղքում ստվերագծերի պատերը: Այս աշխատանքները լույս ու ստվերի մրցակցության, գծային ռիթմերին միմյանց լրացնող մոնումենտալ պատումներ են:

Գույնը նրա համար կենդանի, շնչող, լուսատու էակ է: Հեղինակը փորձում է դուրս գալ նկարի շրջանակից, ճեղքել այն՝ կերպարներին տանելով դեպի նոր պատկերային և արտահայտչական տարածություն: Նա խաղում և փորձեր է անում ֆորմայի հետ, – ուսումնասիրում ձևի կերպարային արտահայտչականության հնարավորությունները:

Հեղինակի կտավները լոկ կերպարվեստի գործեր չեն. դրանք մտքեր են, զրույցներ՝ շատ տարբեր, միմյանց հակասող և միմյանց լրացնող: Նկարչին հաջողվում է իրեն բնորոշ նուրբ աշխարհընկալումով գտնել տիպականը՝ չկրկնվելով և ոչ մի աշխատանքում: Սակայն հեղինակն ունի սեփական, միանգամայն ճանաչելի ոճ. դա կերտող, կրակոտ, հյութեղ գույնն է և պլաստիկ, հստակ ու միևնույն ժամանակ թրթռուն գիծը: Դիպուկ զգացողությամբ ստեղծված հեղինակի աշխատանքները դառնում են սեփական հոգով անցկացված, զգացած և վերապրած պատկերներ: Հեղինակը ներկայանում է որպես գույնի և գծի

2 **Գումցյան Ն.,** *Անատոլի Գրիգորյան*..., էջ 6:

երգիչ՝ դիտողի մեջ ստեղծելով ուրույն հեքիաթային–տոնական հոգեվիճակ, տրամադրություն. երբ իրականը դառնում է հեքիաթ և կախարդանք: Եվ այս նոր իրականության մեջ տիրում են անսահման սերն ու բարությունը: Այստեղ են արտահայտված նրա փիլիսոփայական աշխարհայացքը, գեղագիտական հայացքները և միայն մեծ վարպետին բնորոշ անվախ անկեղծությունը:

Գրիգորյանի երևակայական աշխարհում յուրաքանչյուր երևույթ փոխկապակցված է, իսկ աշխարհը միասնական է, քանի որ Արարչի ստեղծածն է: Արարչից անջատ, աշխարհը տրոհվում և փլվում է բազմաթիվ անէական և երկրորդական տարրերի, իսկ իրականությունը դառնում է չգիտակցված և անկառավարելի: Իրականությունը ընկալվում է ոչ թե որպես առանձին միասնությունների կապ, կրկնվող տպավորությունների ճանաչելի համակարգ, երբ ընդհանուրը ստանում է որոշակի հասկացություն, և մի «այս»–ը մյուս «այս»–ի հետ կազմում է «այն», և որ «այս»–ը չի ենթադրում «այն»–ը այլ, առանձին հատվածներով, այն փըշրանքներով, որոնք գտնվում են դիտակետում և գրավում են նկարչի ուշադրությունը: Քանի որ աշխարհը էմպիրիկ անբաժանելի անմիջական իրականություն է, այն դառնում է իրականությունը միավորող կենտրոն, որտեղ յուրաքանչյուր «այս»–ը ճանաչվում և ընդունվում է աստվածային «այն»–ում: Այսպիսով, նկարչի հիերարխիկ մտածողության մեջ ամենակարևոր դերը կատարում է խորհրդանշականը: Նա չի պատկերացնում աշխարհն այդպիսին. նա այդպես տեսնում, զգում և ընկալում է, և, հավանաբար, դրանում է նրա անհրաժեշտությունը:

Նա վերջ է դնում պատմությանը և տանում իրականությունը դեպի բացարձակի անփոփոխ եզրեր, որտեղ կարևորը դառնում է իդեալի բացահայտումը: Մյուս կողմից, բացարձակին հասնելը անիմաստ և անհնարին կդարձնի հետագա փնտրումներն ու երազանքները՝ հանգեցնելով բացարձակ նմանության/նույնականության՝ փոփոխություն կրելու անընդունակությամբ:

LANDSCAPES OF ANATOLY GRIGORYAN

MISAK ASLANYAN
Applicant of the
State Academy of Fine Arts of Armenia

Summary

The article talks about the landscapes of Anatoly Grigoryan in which he glorifies the nature of his native land. Staying true to his principles, he reproduces the scenery of his homeland, so beloved and perfect. In none of his paintings does he depict fictional pathetic scenes: these are all everyday, unremarkable ones, but the artist manages to give indescribable emotionality and sensuality to any ordinary tree, bush and stone. The power of Grigoryan's art is in its dominant effect on the viewer. Deliberately simplifying forms and giving them a decorative tone, the artist opens boundless opportunity for the viewer's co–authorship with him: the viewer is able to see his hero, his feelings and emotions, his homeland in every convention, mask, entertainment and theatrical character.

Keywords: Anatoly Grigoryan, landscape, homeland, contour, environment, spatial infinity, panorama, mask, theatricality, identity

ПЕЙЗАЖИ АНАТОЛИЯ ГРИГОРЯНА

МИСАК АСЛАНЯН
соискатель
Государственная академия художеств Армении

Аннотация

В статье говорится о пейзажах Анатолия Григоряна, одного из художников с уникальным и узнаваемым почерком в армянском изобразительном искусстве XX–XXI вв. Обсуждается ряд произведений художника, в которых воспевается родная природа. Оставаясь верным своим принципам, Григорян создает свою Родину, такую любимую и совершенную. Ни в одной из своих картин он не изображает вымышленных патетических сцен: это повседневные, ничем не примечательные сцены. Но любому обычному дереву, кусту, камню художник умудряется придать неописуемую эмоциональность и чувственность. Сила искусства Григоряна–художника в его мощном воздействии на зрителя. Намеренно упрощая формы, придавая им декоративный вид, Григорян открывает перед зрителем безграничную возможность соавторства с художником, где зритель способен увидеть своего героя, свои чувства и эмоции, свою Родину в каждой условности, маске, зрелищно–театральном персонаже.

Ключевые слова: Анатолий Григорян, красочный, сказочный, реальный, мир грез, воображаемый мир, условность, фантазия, обобщения, театральность

Գրականության ցանկ

1. **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ.,** *Հայ արվեստի պատմություն,* Երևան, «Զանգակ», 2009:
2. **Աղասյան Ա.,** *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում*, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009:
3. **Գոմցյան Ն.**, *Անատոլի Գրիգորյան*, *Կատալոգ*, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2008:
4. **Гомцян Н.,** Как творил, так и жил, *Голос Армении*, 23 марта, 2017.

Նկարների ցանկ

1. «Սևան. Սպիտակ քարեր», 1987, կտավ/յուղաներկ (50x55)
2. «Վաղ գարուն», 1986, կտավ/յուղաներկ (70x60)
3. «Մայիս», 1996, կտավ/յուղաներկ (70x60)
4. «Ձմեռ», 2008, կտավ/յուղաներկ (70x50)
5. «Լքված փողոց», 2007, կտավ/յուղաներկ (70x50)
6. «Հայկական բնանկար», 2007, կտավ/յուղաներկ (65x55)

Բոլոր աշխատանքները գտնվում են նկարչի ընտանիքին պատկանող հավաքածուում

Ընդունվել է՝ 16.08.2024

Գրախոսվել է՝ 10.09.2024

Հանձնվել է տպ.՝ 03.03.2025



1



2



3



4

5



6